

- 54 Եւ եւս զըզգեստ մի լ' ազնիւ ինձ սըկի
Առ պատարագիչ Եպիսկոպոսի
կազմել հրամայէր իւրում ժառանգի
Ընդ այլոց տըրոց տընանկաց տալի :
- 55 Դարձեալ քեռց իւրոց ի նըշան սիրոյ
Թողոյր ըզգումար խուն ինչ գըրամոյ
Ի' ինձ ի յիշատակ ըստ սըրտի իւրոյ
Օժտէր զիւր գըրեանս զըզգեստս ըստ կիսոյ :
- 56 Ապայ զիւր ժառանգ մերս աղօթարան
կըտակաւն իւր առնէր պարտական ,
Տալ մատուցանել հանգիսիւ ի ձայն
Վասն իւր պատարագս յամին ըզքըսան :
- 57 Յետոյ կամէր՝ զի մարմին իւր մեռեալ
Յաջակողմեան դաս տաճարիս պըճնեալ
Ունիցի տապան ծխիւ մեր կերտեալ ,
կափարիչ կըճով կընքեալ եւ օրհնեալ :
- 58 Սոյն վերջին իւրոց կամաց յայտարար
կըտակաւ կացոյց կըտակակատար
Զօշայս վեց ուրբ էին յայնժամ գործավար
Մարմնաւոր իրաց յայս մեր Սուրբ տաճար :
- 59 Այտ թողում խորհիլ զընթերցող վիպիս
Ըզմեծութենէն տագնապի սըրտիս ,
Զի արդարեւ ողջ գըրուած կըտակիս
Փըղցկեցուցեալ սիրտս՝ խոցէր զիմ աղիս :
- 60 Յաւուրսն յայնոսիկ հանէր հըրաման
Գերամբարձ մեծ Դուքս երկրիս Թօսկանեան ,
Ոչ եւս յապագայս կազմել նոր տապան
Առ թաղել զժմեռեալս ի մէջ ժամատան :